ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 671-Ն

«19» հունիսի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԲԱԺՆԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 209-Ն որոշման 2-րդ կետի **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2024 թվականի բյուջեի՝ Բաժին 09 Խումբ 01 Դաս 1 «Նախադպրոցական կրթություն» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածի «458794.0» հազար դրամ թիվը փոխարինել «457420.0» հազար դրամ թվով, «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածի «0» դրամ թիվը փոխարինել «1374.0» հազար դրամ թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

«19» հունիսի 2024 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված N 5
ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան
համայնքի ղեկավարի
2024 թվականի հունիսի 18-ի
թիվ 664-Ա որոշման

Հավելված N 5
ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան
համայնքի ղեկավարի
2024 թվականի ապրիլի 08-ի
թիվ 378-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Հ/Հ	Գործընթաց	Գործընթացի տևողությունը	Պատասխանատու կատարող
1.	Ախուրյան համայնքի ավագանու որոշման ընդունում մասնակցային բյուջետավորման վերաբերյալ	15.02.2024թ.	համայնքապետարանի աշխատակազմ
2.	Իրավական ակտերի նախագծերի կազմման, գործընթացի մեկնարկի նախապատրաստական փուլ	10.04.2024թ.	համայնքապետարանի աշխատակազմ
3.	Բնակչության իրազեկման փուլ	02.05.2024 - 31.05.2024թթ	ծրագրերի կառավարման հանձնաժողով
4.	Քաղաքացիների կողմից ներկայացվող հայտ-առաջարկների ընդունում	01.06.2024թ-30.06.2024թ.	ծրագրերի կառավարման հանձնաժողով
6.	Ներկայացված առաջարկների համապատասխանության գնահատում՝ սահմանված չափանիշներին համապատասխան	01.07.2024թ.-04.07.2024թ.	ծրագրերի կառավարման հանձնաժողով
7.	Հրապարակված արաջարկների քվեարկություն	08.07.2024թ.-26.07.2024թ.	ծրագրերի կառավարման հանձնաժողով
8.	Հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփում	29.07.2024թ - 31.07.2024թ	ծրագրերի կառավարման հանձնաժողով
9.	Քվեարկությամբ ընտրված ծրագրի(երի) իրագործման պլանավորում՝ գնումների մասին օրենսդրությանը համապատասխան	01.08.2024թ-16.08.2024թ	համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներ, հանձնաժողով
10.	Քվեարկությամբ ընտրված ծրագրի(երի) իրագործում	19.08.2024թ-25.12.2024թ	համայնքապետարանի աշխատակազմ, ծրագրերի կառավարման հանձնաժողով
11.	Իրագործված ծրագրի(երի) ամփոփում, գործընթացի արդյունքների ներկայացում	26.12.2024թ-30.12.2024թ	ծրագրերի կառավարման հանձնաժողով,